ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Երևանի քաղաքապետարան

European Bank
for Reconstruction and Development

ՀԱՅԱՍՏԱՆ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ – ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«ESDD8»

ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

27-ը մայիսի, 2015

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ հ. C29500/AMIF-2014-07-07

Պատվիրատու՝

Երևանի քաղաքապետարան

Խորհրդատու՝

համատեղ ձեռնարկություն

«BERNARD Ingenieure ZT GmbH»

Բանհոֆշտրասե 19

A-6060 Հալ-ին-Տիրոլ, Ավստրիա

«HYDRO INGENIEURE Umwelttechnik GmbH»

Շտայներ լանդշտրասե 27ա

A-3504 Կրեմս-Շտայն, Ավստրիա

Ներկայացման գրաֆիկ

ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄ	7332_Solid_Waste_Yerevan_ESDD_08_20150519.docx

ԽՄԲԱԳՐՈՒՄ	ԱՄՍԱԹԻՎ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
00	27.02.2015	Վերջնական տարբերակ
01	25.03.2015	Վերջնական տարբերակ (ՎԶԵԲ մեկնաբանություններով)
02	17.04.2015	Վերջնական տարբերակ (ՎԶԵԲ մեկնաբանություններով II)
03	27.04.2015	Վերջնական տարբերակ (ՎԶԵԲ մեկնաբանություններով III)
04	19.05.2015	Վերջնական տարբերակ՝ հրապարակման համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԷՋ

1. ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 5
1.1 Առկա սոցիալական իրավիճակի ուսումնասիրություն 5
1.2 Խոցելի խմբեր 5
2. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 7
2.1 Ազգային սոցիալական պատշաճ պայմանների ապահովումն ըստ ՀՀ օրենսդրության 7
2.1.1 Իրավական ակտեր և սոցիալական նպաստների տեսակները 9
2.2 Միջազգային սոցիալական պատշաճ պայմանների ապահովումը Հայաստանում 10
2.3 ՎԶԵԲ-ի կատարողական պահանջներ 12
2.4 Տարբերությունների վերլուծություն 13
3. ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ 19
3.1 Նախագծի ազդեցությունների սահմանում 19
3.2 Համապարփակ ազդեցությունների սահմանում 19
3.3 Ազդեցությունը կրող բնակչության սահմանում 20
4. ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ 25
4.1 Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագիր (ԿՊՎԾ) 25
4.2 Հանրային իրազեկում, մասնակցություն և հանդիպումներ 25
4.3 Ազդեցությունը կրող խմբերի հաշվառում 26
4.4 Սոցիալ-տնտեսական հետազոտություն 28
4.5 Գրանցման վերջնաժամկետ 28
4.6 Բողոքներ և բողոքներին արձագանքնման մեխանիզմներ 29
4.7 Փոխհատուցումներ 29
4.7.1 Entitlement matrix and compensation framework 29
4.7.2 Փոխհատուցումներ՝ ըստ մասնագիտական վերապատրաստման 32
4.7.3 Փոխհատուցումներ՝ ըստ սոցիալական ծրագրերի 34
4.7.4 Այլ աջակցություն 34
4.7.5 Փոխհատուցումներ՝ ըստ միջին ֆինանսական արժեքների 35
4.7.6 Ժամանակավոր փոխհատուցումների մատրիցա 37
4.8 Փոխհատուցման պայմանագիր և վերանայման իրավունք 38
4.9 Տեղեկությունների հրապարակում, մասնակցություն և խորհրդատվություն 39
4.10 Մշտադիտարկում և զեկուցում 40
4.11 Արժեքի հաշվարկ 40

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 42

1. ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Մայրաքաղաք Երևանում նախատեսվում է գործող աղբավայրի կողքը կառուցել նոր աղբավայր: Նոր աղբավայրը զբաղեցնելու է շուրջ 29 հա տարածք և պետք է համապատասխանի ԵՄ ժամանակակից աղբավայրերի վերաբերյալ հանձնարարականով ամրագրված լավագույն տեխնիկական միջոցների (ԼՏՄ) կիրառման պահանջներին: Աղբավայրի ամբողջական գոյության շրջանը 30 տարի է: Աղբավայրը համապատասխանում է Հայաստանում թափոնների կառավարման ազգային ռազմավարության պահանջներին:

Սույն ԿՊՎՇԾ-ում նախանշվում են փոխհատուցումների հատկացման սկզբունքները: Երևանում կոշտ թափոնների կառավարման նախագծին, ապա սոցիալական իրավիճակի ուսումնասիրության ընթացքում սահմանվել են տնտեսական ազդեցությունները կրող մարդկանց խմբերը (տե՛ս ՇՄՍԱԳ):

Նախագծի ազդեցությունը կրող մարդկանց թվին են պատկանում աղբահավաքները, ում եկամտի աղբյուր են աղբահավաքումը և վերամշակման ենթակա նյութերի վաճառքը: Հիմնականում, աղբահավքման մեջ ներգրավված են ընտանիքներ, ներառյալ երեխաներ, կանայք և տարեցներ: Ներկայում աղբահավաքումն իրականացվում է գործող աղբավայրում, ինչը սակայն նոր մեխանիզացված աղբավայրում հնարավոր չի լինելու:

Հաշվի առնելով տեխնիկական պահանջները (ցանկապատում, մեքենայացված աշխատանք և անվտանգության պահանջներ) աղբահավաքմամբ զբաղվել այլևս հնարավոր չի լինելու: Ավելին, կոշտ թափոնների աղբավայրի նախագծի իրականացումից հետո նախատեսվում է նաև իրականացնել վերմշակման ծրագրեր: Հետևաբար՝ եկամտի աղբյուրի և զբաղմունքի կորուստը պահանջում են համապատասխան փոխհատուցումների նախատեսում՝ մեղմելու նախագծի իրականացման հետևանքները:

Փաստաթղթի համապատասխան բաժիններում նկարագրվում է գենդերային հարցերի կարգավորման մեխանիզմը՝ ըստ համատեքստի, սակայն առանց այդ խնդիրն առանձին գլխով ներկայացման:

1.1 Առկա սոցիալական իրավիճակի ուսումնասիրություն

ՇՄՍԱԳ (ESDD 04) անցկացվել է 2014 թ. հոկտեմբերին և նպատակ է հետապնդել սահմանելու աղբահավաքների՝ նախագծի ազդեցությունը կրողների խումբը: Հարցազրույց է անցել 18 հոգուց բաղկացած ընտրանքային խումբ: Հարցազրույցներն անկացվել են նանապես պատասրտված հացրաթերթիկի միջոցով, ինչը թույլ է տվել այնուհետևել կատարել որոշակի ընդհանուր եզրակացություններ: Կանանց և տղամարդկանց հստակ թիվը պարզել հնարավոր չի եղել:

1.2 Խոցելի խմբեր

Հետազոտության արդյունքում սահմանվել են հետևյալ խմբերը.

- աղբահանությամբ զբաղվող գործազուրկ մարդիկ

- «Էրեբունի մաքրություն» ընկերությունում պաշտոնապես գրանցված աղբավայրում ներգրավված աշխատակիցներ, որոնք նաև ոչ պաշտոնական հիմունքներով աղբահավաքման միջոցով եկամուտ են ստանում աղբավայրից
- Աղբահավաքմամբ զբաղվողների ընտանիքների անդամներ, ներառյալ կանայք, երեխաներ և տարեցներ

2. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

2.1 Ազգային սոցիալական պատշաճ պայմանների ապահովումն ըստ ՀՀ օրենսդրության

Սոցիալական նպաստների մեծ մասը տրամադրվում է Հայաստանի կառավարության կողմից: Բոլոր սոցիալական ծրագրերը համակարգում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: Կառավարությունը պատասխանատու է զբաղվածության քաղաքականության շրջանակներում կայացվող որոշումների և անհրաժեշտության դեպքում՝ դրանց համապատասխանեցման համար:

Տարվա ընթացքում իրականացվելիք բոլոր սոցիալական ծրագրերը, որոնք ենթարկվում են զբաղվածության քաղաքականությանը, պետք է համապատասխանեցվեն այս որոշմանը:

2015 թ. զբաղվածության քաղաքականությունը հիմք է ընդունում ՀՀ կառավարության «Զբաղվածության մասին» 534-Ն որոշումը, որում ներկայացված են սոցիալական ծրագրերի մասին մանրամասները, դրանցում մասնակցության պահանջները, պահանջվող փաստաթղթերը և այլ հարակից հարցեր: Այս սոցիալական ծրագրերում կարող են մասնակցել միայն զբաղվածության կենտրոններում գրանցված մարդիկ:

Որոշումը կայացվել է ՀՀ զբաղվածության մասին օրենքի հիման վրա: 2015 թ. կառավարության որոշման համարը 534-Ն է:

ՀՀ կառավարության 534-Ն որոշումը կայացվել է համաձայն ՀՀ զբաղվածության մասին՝

- 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 10-րդ կետերի
- 6-րդ հոդվածի 5-րդ մասի
- 9-րդ հոդվածի 1-ին մասի և 5-րդ մասի 6-րդ կետի
- 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ և 8-րդ կետերի
- 20-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերի և 15-րդ մասի
- 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ից 3-րդ կետերի և 4-րդ մասի
- 22-րդ հոդվածի 2-րդ մասի
- 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-ից 7-րդ կետերի
- 24-րդ հոդվածի 6-րդ մասի

2015 թ. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է զբաղվածության քաղաքականության վերաբերյալ հետևյալ ծրագրերը

- Աշխատավարձերի օժանդակ վճարում – ծրագրի նպատակն է աշխատատուներին խրախուսել աշխատանքի ընդունել անմրցունակ անհատների՝ աշխատավարձերի մի մասի վճարման միջոցով [ՀՀ կառավարության 534-Ն որոշման հավելված 15]
- Մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում – Ծրագիրը նպատակ ունի խթանելու գործազուրկ մարդկանց և աշխատանք փնտրողների աշխատանքի տեղավորմանը, կրճատելու ռիսկայնությունը, ինչպես նաև սատարելու ձեռնարկատիրությանը: Ծրագիրը թույլ է տալիս մասնագիտական հմտություններ և գիտելիքներ ստանալ՝ աշխատաշուկայի

պահանջարկին համապատասխան [ՀՀ կառավարության 534-Ն որոշման հավելված 11]

- Մասնագիտական փորձի ձեռքբերում – Ծրագիրը նպատակ ուն իաջակցելու արդեն մասնագիտություն ձեռք բերած այն գործազուրկ մարդկանց, ովքեր առաջին անգամ են մուտք գործում աշխատաշուկա և կարիք ունեն մասնագիտական վերապատրաստման [ՀՀ կառավարության 534-Ն որոշման հավելված 12]
- Աշխատանքի տոնավաճառների կազմակերպում – Ծրագիրը նպատակ ունի աշխատանք փնտրողներին աջակցել տեղավորվել աշխատանքի, ինչպեսն ան անմիջական կապի միջոցով աշխատատուին գտնել լավագույն թեկնածուին [ՀՀ կառավարության 534-Ն որոշման հավելված 7]
- Աշխատատուներին միանվագ վճարումներ – Ծրագրի նպատակը աշխատատուներին անմրցունակ անձանց աշխատանքի ընդունել խրախուսելն է: Հնարավորություն է տալիս ձեռք բերել աշխատանքային փորձ և պրակտիկ գիտելիք: [ՀՀ կառավարության 534-Ն որոշման հավելված 8]
- Ֆինանսական առավելություններ՝ ոչ պետական զբաղվածության հարցերով զբաղվող կազմակերպությունների ծառայություններից օգտվելու համար (պետական զբաղվածության հարցերով կազմակերպությունների ծառայություններն անվճար են): Նպատակը աշխատանք գտնելու լայն հնարավորությունների ընձեռումն է [ՀՀ կառավարության 534-Ն որոշման հավելված 17]
- Աշխատատու կազմակերպություններ այցելությունների հետ կապված ծախսերի փոխհատուցում – Ծրագիրը նպատակ ունի անմրցունակ անհատների ակտիվության խթանումը և ինքնուրույն որոնումների մեջ ներգրավումը [ՀՀ կառավարության 534-Ն որոշման հավելված 18]
- Այլ վայրում աշխատանքի որոնման խրախուսում – Ծրագրի նպատակն է ապահովել կայուն աշխատանքով և խթանել ՀՀ մարզերում (բացառությամբ Երևանի)՝ հատկապես գյուղական և սահմանամերձ շրջաններում թափուր աշխատատեղերի համալրմանը և ներքին աշխատանքային շարժականության ապահովմանը [ՀՀ կառավարության 534-Ն որոշման հավելված 13]
- Շուկայում անմրցունակ անհատների շրջանում փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցություն – Ծրագրի նպատակն է կայուն զբաղվածության պաահովումը, շուկայում անմրցունակ անհատներին փորք ձեռնարկատիրական գործունեություն իրականացմանն աջակցությունը, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը [ՀՀ կառավարության 534-Ն որոշման հավելված 16]

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախախարի կողմից իրականացվում են նաև հետևյալ սոցիալական ծրագրերը.

<u>Ծրագրեր՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար</u>

- Պրոթեզային հարմարանքներ օգտագործող մարդկանց աջակցություն, պորթեզների վերանորոգման աջակցություն, ներառյալ ձայնային և տեսողական պրոթեզների ապահովում
- Անվասայլակների և լսողական սարքերի ապահովում

- Բժշկական և հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների ծրագիր
- Տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար գրքերի պատրաստում
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երիտասարդների և դեռահասների սոցիալական վերականգման ծրագրեր
- Մասնագիտական կողմնորոշման, աշխատատեղում վերականգման և խորհրդատվական ծրագիր՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար

Ծրագրեր տարեցների համար

Ծերերի ցերեկային խնամքի ծառայություններ

- Միայնակ ծեր քաղաքացիների համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մատուցվում են ցերեկային խնամքի ծառայություններ՝ հատուկ օբյեկտներում (Երևանում՝ 1 օբյեկտ): Խնամքի ծառայություններ են ստանում 1090 թոշակառու (կացարան, խնամք, երեքանգամյա սնուն, հագուստ, կենսապահովման միջոցներ, հոգեբանական-սոցիալական վերականգնում, մշակութային և հոգևոր ծառայություններ) [ՀՀ կառավարության 39-րդ արձանագրություն-որոշման 3-րդ մասի 5.1 կետ]

Ծերերի տնային խնամքի ծառայություններ

- Ծրագիրը նախատեսված է միայնակ տարեցների համար և մատուցվում է պետական՝ «Տնային խնամք տարեց և հաշմանդամ քաղաքացիների համար» սոցիալական կենտրոնի կողմից: Ծառայություններից օգնտվում է 1500 միայնակ տարեց և հաշմանդամություն ունեցող քաղաքացի: Ծառայությունները ներառում են՝ տնտեսվարման, հոգեբանական-սոցիալական, բժշկական և իրավաբանական աջակցություն և խոնրհրդատվություն: [ՀՀ կառավարության 39-րդ արձանագրություն-որոշման 3-րդ մասի 5.3 կետ]

Ժամանակավոր կացարանների տրամադրում՝ անտուն քաղաքացիների համար

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն աջակցում է «Hans Christian Cofoed» բարեգործական հիմնադրամին՝ 100 հոգու համար ժամանակավոր կացարան ապահովելու հարցում (առավելագույնը 3 ամիս ժամկետով): [ՀՀ կառավարության 39-րդ արձանագրություն-որոշման 3-րդ մասի 5.4 կետ]

Տարեցների համար նախատեսված ապագա ծրագրեր

- Հոգեկան խնդիրներով տարեցներին և հաշմանդամ մարդկանց անվճար և համապարփակ աջակցության տրամադրման ծրագրի առաջարկի մշակում
- Անտուն մարդկանց կարիքների գնահատում՝ աջակցության ծրագրերի մշակման նպատակով

2.1.1 Իրավական ակտեր և սոցիալական նպաստների տեսակները

«Պետական նպաստների մասին» օրենքով տարբերակվում է նպաստների չորս տեսակ.

- Ընտանեկան նպաստ
- երեխայի ծննդի դեպքում միանվագ նպաստ

- երեխաների նպաստ
- Զոհված ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված զինվորականների ընտանիքներին տրամադրվող աջակցություն

Ընտանեկան նպաստի և միանվագ վճարների ծրագիր

Ընտանեկան նպաստը նախատեսվում է ամենաաղքատ ընտանիքների, հատկապես երեխաներ ունեցող ընտանիքների, բազմանդամ ընտանիքների համար՝ ըստ բնակության վայրի, կամ բարձրադիր սահմանամերձ բնակավայրերում բնակվողների համար:

Միանվագ վճարները տրամադրվում են երեխայի ծնունդի, երեխայի դպրոցական տարիքի հասնելու, մահվան դեպքերում (հուղարկավորության ծախսեր) [ՀՀ կառավարության 145-Ն որոշման հավելված 8]

Մինչև 2 տարեկան երեխաների խնամքի համար տրամադրվող նպաստ

This allowance is equal to 60% of minimum salary. Նպաստի գումարը հավասար է նվազագույն աշխատավարձի մինչև 60 տոկոսին [ՀՀ կառավարության 145-Ն որոշման հավելված 9]

Երեխաների խնամքի նպաստ

Նպաստի չափը պայմանավորվում է ընտանիքի երեխաների թվով

2.2 Միջազգային սոցիալական պատշաճ պայմանների ապահովումը Հայաստանում

ԱՄՆ ՄԶԳ Կենսաապահովման պայմանների բարելավում՝ **Livelihood Improvement through աշխատանքի տեղավորմանը նպաստելու միջոցով («LIFE» ծրագիր)** նախագիծը հաշմանդամություն ունեցող մարդկանց առաջարկում է տեղական շուկայում աշխատանքի տեղավորման նոր մոտեցումներ: Նախագիծը նպատակ ունի վերացնելու հաշմանդամություն ունենցող մարդկանց աշխատանքի տեղավորման օրենսդրական խոչընդոտները,, զարգացնել հաշմանդամներին աշխատանքի շուկայում վերաինտեգրելու համակարգը, աջակցելու ինստիտուցիոնալ անհրաժեշտ բարեփխումներին:

Կենսաթոշակային բարեփոխումների ներդրման նախագիծը (ԿԲՆՆ) տեխնիկական աջակցություն է տրամադրում Հայաստանում կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացման և միասնականացված սոցիալական ծառայությունների ապահովման գործում, ինչը կոչված է նպաստելու անհատների, տնային տնտեսությունների և համայնքների կողմից սեփական սոցիալական ռիսկերը և կարիքներն առավել նպաստավոր կերպով կառավարելուն:

Սոցիալապես խոցելի երեխաների սոցիալականացումը Հայաստանում

Ծրագիրը նպատակ ունի աջակցելու Հայաստանի ազգային սոցիալական ծրագրին, որի խնդիրը հատուկ հաստատություններում գտնվող երեխաների համար ընտանիքներում սոցիալական ծառայությունների մատուցման այլընտրանքային ծրագրի իրականացումն է: Զուգահեռաբար, ծրագիրը նաև կօգնի ամրապնդելու համայնքային սոցիալական աշխատողների ցանցը և ինտեգրելու երեխաների պաշտպանությունը միասնական

սոցիալական ծառայությունների փաթեթում:

Սոցիալական սեկտորի բարեփոխումների աջակցություն՝ Հայաստանում

Ծրագիրը նպատակ ունի գտնելու Հայաստանում սոցիալական ապահովության ավելի նպաստավոր համակարգ, որն առավել համապատասխան կլինի քաղաքացիների կարիքներին և խնդիրներին: Նախագիծը կնպաստի սոցիալական սեկտորի բարեփոխումների մշտադիտարկման մեջ քաղաքացիների ներգրավմանը, կուժեղացնի քաղաքական հասարակության ինստիտուտների դիրքերն այս բարեփոխումները ներկայանցելու և վերահսկելու գործում, կմշակի սոցիալական քաղաքականությունների բարելավմանն ուղղված առաջարկներ և կնպաստի Հայաստանում սոցիալական իրավունքների պաշտպանությանը:

<u>Հայ օգնության հիմնադրամ</u>

Եվս մեկ կամզկերպություն, որը նպատակ ունի աջակցելու սոցիալապես խոցելի երեխաներին և կամ աղքատ նըտանիքներից դուրս եկող երեխաներին: կախված կոնկրետ իրավիճակից, կազմակերպությունն ապահովում է հագուստ, սնունդ և դրամական միջոցներ: Նաև կազմակերպում է երկամյա արհեստգործական դասընթացներ այս երեխաների համար, նպաստում նրանց տեղավորմանը և ապահովում բոլոր անհրաժեշտ պարագաները:

<u>«Վորլդ վիժն» Հայաստան</u>

Կազմակերպությունը ծրագիր է իրականացնում Հայաստանի մարզերում, նաև Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքում: Երևանում գտնվող ծրագրի մասնակից կարող են դառնալ մինչև 11 տարեկան երեխաներ, ովքեր բնակվում են նշված շրջանում, գրանցված են «Վորլդ վիժն» ծրագրում և համապատասխանում են ծրագրի չափանիշերին: Այս ծրագիրը նախատեսված է հաշմանդամություն ունեցող, միակողմանի ծնողազուրկ, ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաների համար: Չափանիշերին համապատասխանության դեպքում երեխան ներգրավվում է ծրագրում:

Ծրագրի շրջանակում երեխաները գտնվում են մասնագետների վերահսկողության տակ, մասնակցում են բազաթիվ միջոցառումների, դասընթացների և ստանում կյանքի անհրաժեշտ հմտություններ և գիտելիք: Ավելին, աշխատանքային տարիքի քույր կամ եղբայր կամ ընտանիքի այլ չափահաս անդամ ունենալու պարագայում վերջիններս ևս աջակցություն են ստանում հմտություններ ձեռք բերելու կամ արհեստներ սովորելու հարցում (պարագաները տրամադրվում են): Նաև աջակցություն է տրամադրվում աշխատանքի տեղավորման հարցում:

2.3 ՎՁԵԲ-ի կատարողական պահանջներ

ՎՁԵԲ-ի կատարողական պահանջ 5 («Տնտեսական կորուստներ»)

Տնտեսական կորուստների ազդեցությունը ներկայացված է կարատողական պահանջ 5-ում (ԿՊ 5): ԿՊ 1-ը և ԿՊ 10-ը արծարծում են բնապահպանական և սոցիալական գնահատման անցկացման անուրաժեշտությունը, հատկապես ինչ վերաբերում է սոցիալական խնդիրներին և պահանջում գնահատման արդյունքներից և տեխնիկական նախագծից բխող սոցիալական փոխահատուցումներ: Տնտեսական կորուստներին առնչվող բողոքներին արձագանքման մեխանիզմը պետք է համապատասխանի ԿՊ 10-ին:

Տնտեսական կորուստ է համարվում ունեցվածքի, ռեսուրսի կորուստ, որը նախագծի իրականացման հետևանքով հանգեցնում է եկամտի աղբյուրի կամ կենսապահովման միջոցների կորստի:

Նախագիծը մշակելիս պետք է հաշվի առնել ազդեցությունը կրող բոլոր անձանց խնդիրները և միջոցներ ձեռնարկել մարդկանց հնարավորին կարճ ժամկետներում դրա մասին տեղեկացման և որոշումների կայացման գործընթացում նրանց ներգրավման ուղղությամբ:

Ազդեցությունը կրող անձինք պետք է հնարավորություն ունենան մասնակցելու փոխհատուցումների փաթեթների քննարկմանը, համապատասխանության պահանջները, վերաբնակեցման համար աջակցության ձևերը և առաջարկվող ժամանակացույցը:

ԿՊՎՇԾ-ով պետք է նախատեսել ազդեցությունը կրող մարդկանց տրամադրվող փոխհատուցումը՝ թափանցիկ մեխանիզմով, հետևողականորեն և հավասար պայմանների պահպանմամբ: Համապատասխանաբար, անհրաժեշտ է դիտարկել ազդեցությունը կրող մարդկանց շրջանում մարդահամարի և տնտեսագիտական ուսումնասիրության անցկացման հնարավորությունը (լիարժեք մարդահամարը և ուսումնասիրությունը հետգա քայլերի մաս են կազմում): Այնուհետև, (հետագա քայերը ձեռնարկելիս), փոխհատուցման ծարգրով սահմանավում են փոխահատուցում ստացողների հանդեպ ներկայացվող պահանջները՝ սահմանափակելով հավակնողների թվի հնարավոր աճը:

Ավելին, շրջանակային ծրագրում պետք է հաշվի առնվեն նախագծից ստացվող հնարավոր բոլոր օգուտները, ուսումնասիրվեն տեղական և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից աջակցության տրամադրման գործընթացի արագացման նպատակով գործող ուղիները, ինչպես նաև օգնել մարդկանց հաղթահարելու եկամտի աղբյուրի կորստի հետ կապված դժվարությունները:

ԿՊ 5-ի համաձայն եկամուտ ստանալու ուղիների վրա կենտրոնանալու համար անհրաժեշտ է թիրախային աջակցություն (օրինակ՝ վարկ, վերապատրաստման դասընթացներ, աշխատանքի հնարավորություններ):

Ժամանակավոր աջակցությունը, նպաստները պետք է տրամադրվեն համապատասխան հաշվարկների հիման վրա (եկամտի աղբյուրների և կեսամակարդակի վերականգման համար պահանջվող ժամանակը):

Ինչպես նշվում ԿՊ5-ում, շրջանակային ծրագրի փաստաթղթում պետք է ներառվեն հետևյալ կետերը (սույն նախագծի պարագայում).

- շրջանակային ծրագրի նպատակները

- նախագծի ազդեցությունները, տնտեսական կորուստ կրողների ինքնությունը, կորուստի ենթակա ռեսուրսները
- Կորուստների անխուսափելիությունը և դրանց նվազեցման ապացույցները
- Փոխհատուցումների իրավական հիմքերը
- Ազդեցությունը կրողների հետ այլընտրանքների, որոշումների կայացման հարցում նրանց մասնակցության աստիճանի խորհրդակցության գործընթացի նկարագրությունը
- տնտեսական կորուստներ կրող բոլոր խմբերի մարդկանց տրամադրվող փոխհատուցման նկարագրությունը
- Կորուստի ենթակա օբյեկտների և ռեսուրսների և դրանց հասանելիության գնահատման մեթոդների նկարագրությունը՝ ամբողջական փոխհատուցման դեպքում և վճարման ենթակա գումարների հաշվարկման բնաաձևերը
- Կենսաապահովման պայմանների և կյանքի ստանդարտների բարելավմանը կամ առնվազն վերակազնմանն ուղղված միջոցների նկարագրությունը
- Փոխհատուցումը ոչ համարժեք համարող մարդկանց կողմից դրանց բողոքարկման մեխանիզմների նկարագրությունը
- Շրջանակային ծրագիրը իրականացնող ինստիտուտների/կազմակերպությունների պատասխանատվությունների շրջանակի նկարագրությունը և բողոքներին արձագանքման մեխանիզմները
- Մշտադիտարկման, գնահատման և զեկուցման մեխանիզմների մանրամասն նկարագրությունը
- Շրջանակային ծրագրի իրականացման ժամանակացույցի և բյուջեի նկարագրությունը

ԿՊ 5-ում նաև բերվում են ՎԳՊ և դրանից բխող նպատակները: Վերաբնակեցում չի նախատեսվում, քանի որ ըստ նախագծի բնակության վայրի կորուստ չի ենթադրվում: ԿՊ 5-ի այս կետերը կիրառելի չեն տվյալ շրջանակային ծրագրի դեպքում:

2.4 Տարբերությունների վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են հայաստանյան օրենսդրության և ՎԶԵԲ պահանջների միջև առկա տարբերությունները:

ԽՆԴԻՐ	ՎԶԵԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
Նախագծի ազդեցությունը կրող մարդկանց խմբի	Բնապահպանական և սոցիալական գնահատման ընթացքում	Չկա	Հայաստանյան օրենսդրությամբ եկամտի աղբյուրի կորստի համար փոխհատուցում չի	Լիարժեք մարդահամար և տնտեսագիտական հետազոտությու

ԽՆԴԻՐ	ՎՋԵԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
սահմանում Կենսաապահովման պայմանների վերականգնման շրջանակային ծրագրի անհրաժեշտություն	տնտեսական կորուստների սահմանում (անխուսափելի ազդեցություն)		նախատեսվում (որպես աջակցություն և այլն) Սա նշանակում է, որ հայաստանյան օրենսդրությամբ ևս շրջանակային ծրագրի կարիք կա	ն՝ հետագա քայլերով, որոնցում գենդերային հարցերին համապատասխնա արձագանքելու համար կներառվեն թե կանայք և թե տղամարդիկ Կենսաապահովման պայմանների վերականգնման շրջանակային ծրագիր և Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագիր՝ հետագա քայլերով
Շրջանակային ծրագրի հանրության համար հրապարակում	որոշումների կայացման հարցում հնարավորին վաղ ժամկետներում տեղեկացում	Չկա	Հայաստանյան օրենսդրությամբ ազդեցությունները կրող մարդկանց հնարավորին վաղ տեղեկացման պահանջ չկա	Լիարժեք մարդահամար /ազդեցությունը կրող մարդկանց շարքում տեղեկությունների տարածում (հետագա քայլերով)

ԽՆԴԻՐ	ՎՋԵԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
Մասնակցություն	համապատասխանության չափանիծները սահմանելու, աջակցության տեսակները և բաշխման ժամանակացույցը սահմանելիս ազդեցությունը կրող մարդկանց մասնակցություն	Չկա	Հայաստանյան օրենսդրությամբ ազդեցությունները կրող մարդկանց մասնակցության պահանջ չկա	Փոխհատուցուների վերջնական սահմանման գործընթացում ազդեցությունը կրող մարդկանց ներգրավում՝ հետգա քայլերով
Համապատասխանություն	Փոխահատուցումների տրամադրման մեխանիզմների թափանցիկություն, հետևողականություն և համաչափություն (գնահատման մեթոդներ)	Գրանցում՝ զբաղվածության կենտրոնում Գրանցում՝ պետական սոցիալական ծրագրերում համապատասխան անձնական փաստաթղթեր՝ գրանցման համար	Տարբերություններ չկան	Համապատասխանության չափանիշերի մասին տեղեկացում Անհրաժեշտ աջակցել սոցիալական ծրագրերում ներգրավման հնարավորություններ ստանալու հարցում (օրինակ՝ անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելիս
Աջակցություն	Շրջանակային ծրագիրը պետք է սահմանի նախագծի իրականացումից ակնկալվող օգուտները և աջակցության	ՀՀ օրենքը (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն) Սոցիալական ծրագրեր՝	Տարբերություններ չկան	Գործող սոցիալական ծրագրերի գրանցում՝ շրջանակային ծրագրում Աջակցություն՝ առկա

ԽՆԴԻՐ	ՎՋԵԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
	հնարավորությունները	գործազուրկների և խոցելի խմբերի համար		ծրագրերից օգտվելու հարցում
	Նպատակային աջակցություն (վերապատրաստում, վարկային կամ աշխատանքի տեղավորման հնարավորություններ)	ՀՀ օրենքը (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն) Սոցիալական ծրագրեր՝ գործազուրկների և խոցելի խմբերի համար	Տարբերություններ չկան	Աջակցություն՝ առկա ծրագրերից օգտվելու հարցում (հաշվի առնելով գենդերային հարցերը, օրինակ՝ վերապ արտաստման դասընթացի ժամանակ երեխայի խնամքի խնդիրը)
	Հատուկ աջակցություն՝ սոցիալապես խոցելի մարդկանց	Հատուկ աջակցություն հաշմանդամներին, երեխաներին, տարեցներին և թոշակառուներին Նպաստները տրամադրվում են պետության կողմից	Տարբերություններ չկան	Աջակցություն խոցելի խմբերին՝ առկա ծրագրերից օգտվելու հարցում
Նպաստներ	Անցումային աջակցություն՝ համապատասխան հաշվարկների հիման վրա	Գործազրկության դեպքում նպաստ չի նախատեսված	Պետությունը անցումային փուլի նպաստ չի տրամադրում	Այն դեպքերում, երբ ոչ տեղական և ոչ էլ միջազգային ծրագրերով անցումային փուլի բարդություններ

ԽՆԴԻՐ	ՎՋԵԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
				ը հաղթահարելուն ուղղված աջակցություն չի նախատեսվում աջակցությունը պետք է տրամադրի Երևանի քաղաքապետարանը Փոխահատուցումների կասկադային համակարգը ներառում է անցումային փուլում նպաստ մինչև 3 ամսվա ընթացքում (հիմք ընդունելով մանրամասն տնտեսագիտական հետազոտության արդյունքների տվյալները) (տե՛ս աղյուսակ 4)
Ընթացակարգային պահանջներ	Բողոքներին արձագանքման մեխանիզմներ	ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում	Տնտեսական կորուստների դեպքում բողոքներին արձագանքման մեխանիզմներ չեն նախատեսվում (օրինակ՝ դատական	Շրջանակային ծրագիրը նախատեսում է բողոքներին արձագանքման մեխանիզմներ նաև հետգա

ԽՆԴԻՐ	ՎԶԵԲ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
			կարգով)	փուլերում
	Մշտադիտարկում, գնահատում և զեկուցում	ՀՀ օրենսդրության մբ չի նախատեսվում	Մշտադիտարկում, գնահատում և զեկուցում չի նախատեսվում	Շրջանակային ծրագրում սահմանված են մշտադիտարկումը, գնահատումը և զեկուցումը

Աղյուսակ 1. Հայաստանյան օրենսդրության և ՎԶԵԲ պահանջների միջև առկա տարբերությունները

Ընդհանուր առմամբ, Կենսաապահովման պայմանների վերականգնման շրջանակային ծրագիրը պետք է համահունչ լինի ՎԶԵԲ պահանջներին: Ազգային օրենսդրության հետ տարբերությունների առկայության դեպքում անհրաժեշտ է ընդունել առավել բարձր չափանիշերը, որոնք հիմնականում համընկնում են ՎԶԵԲ պահանջներին, այդ թվում՝ վերը թվարկված ոլորտներում: Շրջանակային ծրագիրը հետևաբար ներառում է հատուկ դրույթներ, ինչպիսին են ազդեցությունը կրողների հետ պարբերաբար անցկացվող խորհրդակցությունները, բողոքներին արձագանքման մեխանիզմների ստեղծումը և կիրառումը, մարդահամարի անցկացումը, փոխհատուցումներ ստանալու համար անհրաժեշտ պայմանները, ժամանակացույցը, ինչպես նաև կենսաապահովման պայմանների վերակագնման գործընթացի մշտադիտարկումը և զեկուցումը Երևանի քաղաքապետարանին և ՎԶԵԲ-ին:

3. ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

3.1 Նախագծի ազդեցությունների սահմանում

Ժամանակակից պահանջներին համապատասխան աղբավայրի կառուցման նախագիծի իրականացման համար (տե՛ս տեխնիկական մանրամասները ESDD 04-ում և տեխնիկական իրականացման հնարավորությունների ուսումնասիրությունում) աղբահավաքման գործընթացները պետք է դադարեցվեն: Պատճառը տեխնիկական պահանջների առանձնահատկություններն է, անվտանգության հարցերը, լավագույն հնարավոր միջոցների կիրառումը և ԵՄ՝ աղբավայրերի հանդեպ ներկայացվող պահանջները:

Մեքենաների (խտացնող մեքենա, բուլդոզեր) օգտագործման պատճառով պատահարների հնարավորությամբ պայմանավորված՝ մարդկանց չարտոնված մուտքը պետք է արգելվի: Թափոնների կառավարման կայանի առկայությունը, ուր մուտքը ևս սահմանափակվելու է աղբահավաքների համար (տե՛ս իրականացման հնարավորությունների ուսումնասիրությունը) ևս պայմանավորված է տեխնիկական պահանջներով, ներառյալ անվտանգությանը, ապահովությանը և առողջությանը վերաբերող պահանջները:

Ավելին, վերամշակման ներկա պահին ոչ ֆոլմալ միջոցներով կազմակերպումը (գործում է թափոնները վաճառողների և գնողների ցանց) նախատեսվում է վերանայել, իսկ հետագայում նաև՝ Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացնել վերամշակման ծրագիր (տե՛ս ESDD 02, ՇՄՄԿՀՈՒԱ): Սա բնականոն կերպով կդադարեցնի ցանկացած տեսակի աղբահավաքումը:

Վերը թվարկված տեխնիկական պահանջները և աղբահավաքման միջոցով եկամուտների ստացման հնարավորությունների վերացումը հաշվի առնելով, ներակ պահին աղբահավաքմամբ զբաղվող մարդիկ նախագիծը սկսվելուն պես կկորցնեն իրենց եկամտի աղբյուրը:

Սա ազդեցություն կունենա նրանց տնային տնտեսությունների և ընտանիքների անդամների համար:

3.2 Համապարփակ ազդեցությունների սահմանում

Աղբահավաքումը չի վերաբերում միայն աղբ հավաքողներին: Վերամշակման ենթակա նյութերը վաճառվում են և գնվում գնորդներից, ովքեր պարբերաբար գալիս են աղբահավաքների բնակության տարածք և հավաքում դրանք: Սա նշանակում է, որ ներկայում վերամշակումն իրականացվում է ոչ ֆորմալ կերպով:

Աղբահավաքումը սկսվել է 1989 թվականից: Հետևաբար՝ հավաքողների, վաճառողների և գնողների միջև կապերը ըստ երևույթի ձևավորել են ոչ ֆորմալ համակարգ, ինչը ենթադրում է վաճառողների և գնողնորի միջև սերտ կապերի առկայություն:

Հաշվի առնելով, որ աղբահավաքումը պետք է դադարեցվի, վաճառողները և գնողները կարող են անվերահսկելի կուտակումներ ստեղծել աղբավայրի դիմաց կամ դրա տարածքում՝ վերամշակելի նյութեր ձեռք բերելու համար: Վաճառքի, գնման և աղբահավաքման համակարգերը կարող են պահպանվել այնքան ժամանակ, քանի դեռ

չկա Երևանում թափոնների վերամշակման հնարավորություն: Նուբարաշենի աղբավայրում անվերահսկելի կուտակումը պետք է խստորեն վերահսկվի: Սա կարելի է իրականացնել օրինակ՝ աղբահավաքմամբ զբաղվողների նկատմամբ տուգանքների կիրառման միջոցով:

3.3 Ազդեցությունը կրող բնակչության սահմանում

Նախագծի սոցիալական ազդեցություններն ուսումնասիրվել են նախագիծն իրականացնող թիմի համապատասխան փորձագետների կողմից տրամադրված քարտեզների հիման վրա: «Էրեբունի մաքրություն» ընկերությունը Երևանի քաղաքապետարանի կողմից լիցենզավորված շահագործող ընկերություն է, ինչը ճշտվել է Նուբարաշենի շրջանի ղեկավարի տեղակալի և նախագծի թիմի փորձագետի հետ:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են երկրորդական աղբյուրներ՝ ստացված Հայաստանի վիճակագրական ծառայությունից և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: 2014 թ. հոկտեմբերի 19-ից 24-ն իրականացվել են հարցազրույցներ Էրեբունու համայնքի ղեկավարի, «Երևան մաքրություն» ընկերության ղեկավարի հետ, կիսաբաց հարցումներ են անցկացվել աղբահավաքների, նրանց ընտանիքների և աղբավայրում աշխատողների հետ:

Բացի այդ, 2014թ. հոկտեմբերի 30-ին Նուբարաշենի և Էրեբունու շրջաններում հանրային առողջության վերաբերյալ փորձագիտական հարցումներ են անցկացվել համայնքները սպասարկող բուժքույրերի և բժիշկների հետ, ինչպես նաև Նուբարաշենում սոցիալական նպաստները վերհսկող մարմնի ղեկավարի հետ:

Այսպես կոչված աղբահավաքները, աղբավայրում թափոններ հավաքող մարդիկ են, ովքեր հավաքված թափոններն օգտագործում են սեփական կարիքների համար կամ տեսակավորում են և վաճառում գնորդներին:

Դաշտային ուսումնասիրությունների տվյալները ցույց են տալիս, որ աղբավյարի որոշ ախատակիցներ ևս շահույթ ունեն աղբահավաքման գործունեությունից: Որպես կանոն, աշխատակազմի այս անդամներն ունեն ցածր աշխատավարձ, հանդիսանում են մասնագիտական որակավորում չպահանջող աշխատանք կատարողներ, օրինակ՝ հավաքարարներ են, ովքեր որպես եկամտի հավելյալ միջոց են ընտրել աղբահավաքումը: Քիչ վարձատրվող, ոչ պաշտոնական աշխատակիցների համար աղբավայրը հավելյալ եկամտի աղբյուր է: Աղբավայրը նաև դրա շրջակայքում բնակվող սոցիալապես անապահով և խոցելի մարդկանց համար է եկամտի աղբյուր: տարածքում կան աղբի մնացորդներից կառուցված խճիթներ և տնակներ կամ կիսակառույց քարե շինություններ, որտեղ էլ պարում են այդ մարդիկ, ներառյալ աղբավայրի մի քանի աշխատակիցներ: Նուբարաշենի 2-4 փողոցներն աղբավայրի մոտակայքում հիմնական բնակեցված տարածքն են: Աղբավայրի տարածքում նաև կան ցրված տնակներ և խրճիթներ:

Աղբահավաքները մոտավորապես 160-ից 200 հոգի են: Տվյալը ստացվել է 40 ընտանիքի մասին ունեցած տեղեկությունների հիման վրա հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ընտանիք կազմված է 4-ից 5 անդամից, ներառյալ երեխաները: Աղբավայրը թե աշխատակիցներից ոմանց, և թե մոտակա տարածքների բնակիչների համար տնտեսական եկամտի աղբյուր է: **Նախագծի ազդեցությունը կրող մարդկանց հստակ թիվը և նրանց եկամտի աղբյուրներն ամբողջությամբ ճշգրտվելու են և գնահատվելու մարդահամարի և տնտեսագիտական ուսումնասիրության ավարտին:**

Նուբարաշենի 2-4 փողոցներում պարում են 1-ից 7 անդամ ունեցող մոտ 40 ընտանիք: Թեև բնակիչներ չկարողացան նշել տարածքում ապրողների ճշգրիտ թիվը, նրանք գիտեին ընտանիքների թիվը: Այս կացարանների բնակիչների զգալի մասը սեփականության վկայականներ չունեն: Շատերի համար սեփականաշնորհումը թանկ է և ոչ մատչելի: Բնակիչներից ոչ բոլորն են գրանցված Նուբարաշենի 2-4 փողոցներում: Այդուհանդերձ, տարածքում կա կենտրոնացված էլեկտրա- և ջրամատակարարում, խրճիթների բնակիչներին, ովքեր չունեն այդ ծառայություններից օգտվելու հնարավորություն, աջակցում են հարևանները: Հարցվածներից բոլորը նշել են, որ որոշ փաստաթղթեր ունեն, օրինակ՝ անձնագրեր կամ ծննդյան վկայականներ: Փողոցները մեկուսացած են քաղաքից և նման են առանձին բնակավայրի կամ փոքր գյուղի: Փողոցում հասարակական տրանսխորտ չի գործում, հետևաբար Երևան կամ Նուբարաշեն հասնելու համար անհրաժեշտ է կամ մեքենա կամ զգալի հեռավորություն անցնել ոտքով՝ հիմնական ճանապարհով:

Սովորաբար տղամարդիկ կամ ոտքով են գնում աղբավայր կամ ընդհանուր օգտագործման մեքենայով: բերված աղբը կուտակվում է խրճիթների բակերում: հատուկ նախընտրություններ չկան թափոնների տեսակի առումով. մարդիկ հավաքում են այն, ինչ գտնում են, այդ թվում՝ հաց, ապակե շշեր, պլաստիկ, մետաղներ, փաթեթավորման նյութեր: Այնուհետև թափոնները տեսակավորվում են ըստ բաղադրության և վաճառվում գնողներին, ովքեր հատուկ գալիս են բնակավայր վերամշակելի թափոններ ձեռք բերելու: Կին ավագ ունեցող տնային տնտեսություններում նույն գործառույթներն իրականացնում են կանայք: Սակայն կանայք, այդ թվում տարեց կանայք պակաս շահեկան դիրքում են գտնվում, քանի որ շատերը չեն կարող վճարել թափոնները մեքենայով տեղափոխելու համար, մեքենա չեն վարում, հետևաբար ստիպված են լինում թափոնները ձեռքով կրել լանջն ի վեր: Այդուհանդերձ, համայնքային կապերն ամուր են, գործում է փոխօգնության համակարգ: Ընտանիքների օրական եկամուտը տատանվում է կախված մեքենայի առակայությունից և ընտանիքի անդամների թվից՝ 1000-ից 4000 դրամի սահմաններում (2-ից 7,5 եվրո), ինչն ամսվա կտրվածքում կազմում է 40 000-ից 120 000 դրամ (հստակ եկամտի չափը պարզ կլինի մարդահամարի և հետազոտության ավարտին): Աղբահավքումը նաև կախված է եղանակային պայմաններից. ամռան և ձմռան ամիսներին ավելի դժվար է շոգի և ցրտի պատճառով: տարածքի բնակիչները և աղբավայրի աշխատակիցները դժկամորեն էին պատասխանում աղբավայրից ստացվող եկամուտների մասին հարցերին՝ վախենալով, որ դա կարող է բացասաբար ազդել իրենց կենսապահովման պայմանների վրա: Գործազուրկներից, աղբավայրում թափոնների վաճառքով և գնմամբ զբաղվողներից ստացված պատասխանների համեմատության շնորհիվ կարելի է ենթադրել, որ նվազագույնն ամսական այս եղանակով կարելի է ստանալ 25000 դրամ եկամուտ:

ՍԵՌ, ԱՆՎԱՆ ՍԿԶԲՆԱՏԱՌ, ՏԱՐԻՔ	ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ	ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ	ԱՂԲԱՀԱՎԱՔՈՒՄ	ԱՄՍԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԵԿԱՄՈՒՏ՝ ԱՂԲԱՎԱՅՐԻՑ (ԴՐԱՄ)	ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏԸ՝ ԱՂԲԱՎԱՅՐԻՑ	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ
Թափոն օգտագործող մեկ և ավելի անդամ ունեցող տնային տնտեսություններ						
Տղամարդ Ա, 75	Թոշակառու	կին (թոշակառու)	Կոշիկ, մետաղ, պլաստմասսա	40 000	60%	Ամուսնու և կնոջ թոշակը
Կին Ռ, 30	Գործազուրկ	Ամուսին (գործազուրկ) + 3 երեխա 18-ից ցածր տարիքի	Ամուսինը շիշ և պլաստմասսա է հավաքում	90 000	70%	Երեխաների նպաստ 32 000
Կին Ծ, 53	Գործազուրկ	Ամուսին	Ամուսինը հավաքում է հաց, շիշ, մետաղ, հագուստ	45 000	100%	Չկա
Տղամարդ Կ, 41	Գործազուրկ	Կին (գործազուրկ) + 4 երեխա 18-ից ցածր տարիքի	Հաց, պղինձ, ալյումին	50 000	70%	Երեխաների նպաստ
Տղամարդ Ա, 34	Գործազուրկ	Կին (գործազուրկ)	Պղինձ, թուղթ, շիշ, երկաթ	60 000	100%	Չկա
Կին Ս, 54	Գործազուրկ	3 երեխա (2 18-ից ցածր տարիքի) – ընտանիքի գլուխը կին է	Հաց, կոշիկ, այլ առարկաներ	60 000	100%	Չկա
Տղամարդ Ն, 68	Թոշակառու	Կին (գործազուրկ)+ 2 երեխա (2 18-ից	Երկու չափահաս որդիների հետ	70 000	65%	Թոշակ 40 000

		ցածր տարիքի)	հավաքում է տարբեր առարկաներ			
Կին Ծ, 59	Գործազուրկ	Ապրում է միայնակ	Հաց, կոշիկ, շիշ, այլ առարկաներ	60 000-80 000	100%	Չկա
Կին Մ, 33	Գործազուրկ	Ամուսին + 4 երեխա	Ամուսինը, որդին և ինքը հավաքում են մետաղ, հաց, ապակի, կոշիկ, այլ առարկաներ	60 000	100%	Չկա
Տղամարդ Ա, 24	Գործազուրկ	Հայր և մայր	Հայր և որդի հավաքում են շիշ, մետաղ, հաց	120 000	100%	Չկա
Կին Ա, 17	Դպրոց չի հաճախում	Մայր, տատ + 2 քույր-եղբայր (18-ից ցածր տարիքի), ընտանիքի գլուխը կին է	Տատը և մայրը հավաքում են շիշ, հաց, մետաղ, հին հագուստ	50 000	90%	Երեխաների նպաստ
տղամարդ Ա, 41	Գործազուրկ	կին (գործազուրկ) + 2 որդի	Երկաթ, շիշ, այլ առարկաներ	100 000	95%	Որդիներից մեկը ծառայում է բանակում
Կին Մ, 26	Գործազուրկ	Ամուսին (գործազուրկ + 2 երեխա	Երկաթ, շիշ, այլ առարկան	60 000	100%	Հավանաբար՝ երեխանե

		18-ից ցածր տարիքի)	եր			րի նպաստ
Աղբավայրում աշխատողներ, ովքեր նաև թափոն են օգտագործում						
Տղամարդ Կ, 49	Աշաախատում է աղբավայրում	Կին (գյուղատնտեսություն) + 3 երեխա (1-ը 18–ից ցածր տարիքի)	Հաց, շիշ, ապակի	25 000	25%	Աշխատավարձ 85 000
տղամարդ Ի, 58	Աշխատում է աղբավայրում	Կին (գործազուրկ) + 2 երեխա	Տարբեր առարկաներ	Չի պատասխանել		Աշխատավարձ 76 000
Տղամարդ Լ, 43	Աշխատում է աղբավայրում	Կին + 3 երեխա (2-ը 18-ից ցածր տարիքի)	Չի պատասխանել			Աշխատավարձ 59 000
Տղամարդ Հ, 47	Աշխատում է աղբավայրում	Կին + 4 երեխա (2-ը 18-ից ցածր տարիքի)	Չի պատասխանել			100 000
Կին Ա, 68	Աշխատում է աղբավայրում	Թոռներ (-ը 18-ից ցածր տարիքի) + այլ անդամներ, ընտանիքի գլուխը կին է	Չի պատասխանել			50 000

Աղյուսակ 2. Աղբավայրը շահագործողների և աղբահավաքների հետազոտության արդյունքներ

Վերը բերված աղյուսակը (աղյուսակ 2) պարունակում է նախագծի ազդեցությունը կրողների մոտ 10 տոկոս ընտրանքի մասին տեղեկություններ, որոնք ստացվել են 2014թ. հոկտեմբերին:

18 հոգուց կազմված ընտրանքը թույլ է տվել եզրակացություններ անել ազդեցությունը կրող մարդկանց մասին: Տղամարդկանց և կանանց հստակ թիվը պարզել հնարավոր չէ, քանի որ ազբհավաքումն ապօրինի է և տեղեկություններ տրամադրելիս նկատելի է վախի զգացում: Կարելի եզրահանգել, այնուամենայնիվ, որ տարվա տաք շրջանում աղբահավաքումն ավելի ինտենսիվ է և զգալիորեն կախված է աղբավայրի մուտքի հնարավորությունների, պահանջարկի և որոշակի նյութերից թափոնների գնորդների առկայությունից:

Սահմանված խումբը կարելի է համարել խոցելի, քանի որ նրանց եկամուտի ստացումը կախված է աղբավայրից (ավելի քան 60 տոկոսը եկամուտ է ստանում աղբավայրից):

4. ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

4.1 Կենսաապահովման պայմանների վերականգնման ծրագիր (ԿՊՎԾ)

Կենսաապահովման պայմանների վերականգման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- Ստանալու անհրաժեշտ տվյալները (լիարժեք մարդահամար, տնտեսագիտական հետազոտություն), սահմանելու անհրաժեշտ միջոցառումները (մասնագիտական վերապատրաստում և աջակցություն) և անցումային փուլում տրամարդրվող նպաստի չափը
- Երաշխավորելու, որ բոլոր ազդեցությունը կրող մարդիկ ունեն փոխահատուցման իրավունք (մասնագիտական վերապատրաստում, գործազուրկների համար նախատեսված ծրագրերի մասակցություն, խոցելի խմբերի համար ծրագրեր) և հաշվառված են
- Երաշխավորելու լավագույն հնարավոր աջակցությունը՝ աշխատանքի շուկա վերադառնալու համար
- Երաշխավորելու նախագծի ազդեցությունը կրող մարդկանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին

Գործընթացներում պետք է ներգրավել մարդկանց, ովքեր քաջ ծանոթ են հայաստանյան իրականությանը, որպեսզի նախագիծն ընդունվի ազդեցությունը կրող մարդկանց շրջանում: Դրա համար անհրաժեշտ է անկախ (տեղացի) խոհրդատու, ով կհամակարգի ԿՊՎՇԾ/ԿՊՎԾ գործընթացները: Գենդերային համաչափությունն ապահովելու համար՝ թիմում պետք է ներգրավել և կանանց և տղամարդկանց:

Այդ նպատակով անհրաժեշտ է նշանակել անկախ փորձագետ: Փորձագետը պետք է փորձ ունենա մասնակցային գործընթացները համակարգելու գործում և պետք է լինի Երևանի բնակիչ:

4.2 Հանրային իրազեկում, մասնակցություն և հանդիպումներ

Նախագծի, փոխհատուցումների, կենսաապահովման պայմանների վերականգման միջոցների վերաբերյալ տեղեկացվածություն ապահովելու և նախագծի ազդեցությունները կրողների՝ որոշումների կայացման գործընթացում ներգրավման համար վերջիններիս անհրաժեշտ է նախապես տեղեկացնել:

Փոխհատուցումների, կենսաապահովման պայմանների վերականգման միջոցների վերաբերյալ քննարկմանը մասանկցության հնարավորության մասին ինֆորմացիան անհրաժեշտ է տարածել նրանց շարքերում:

Նման հանդիպումներ անցկացնելու համար հարմար է աղբահավաքների բնակավայրում գտնվող մանկական խաղահրապարակը (Նուբարաշենի ճանապարհներ #2-4): հաշվի առնելով աղբահավաքների միջև ամուր կապերը տեղեկություններն արագ կտարածվեն: նաև անհրաժեշտ է պատրաստել թռուցիկ, որում պետք է նշել.

- Նախագծի մասին ընդհանուր տեղեկությունները

- Մարդահամարի մասին մանրամասները
- Մասնակցության կարգը
- Փոխհատուցման մասին մանրամասները, նաև՝ մասնագիտական վերապատրաստում ստանալու, սոցիալական փաթեթներից օգտվելու համար տրամադրվող աջակցության և աշխատանքի շուկա վերադառնալու վերաբերյալ
- Բողոքների ներկայացման կարգը

Նաև պետք է ընդգծել, որ հանդիպումները հնարավորություն են ընձեռում քննարկելու տարատեսակ հարցեր: Պիլոտային մարդահամարն անհրաժեշտ է անցկացնել տեղում անցկացվող հիմնական մարդահամարից մեկ շաբաթ առաջ:

4.3 Ազդեցությունը կրող խմբերի հաշվառում

Տնտեսական կորուստ կրող և հետևաբար փոխհատուցում և աջակցություն ստանալու իրավունք ունեցող մարդկանց ցուցակը ճշտելու համար նախագծի իրականացման հաստատումը ստանալուց առաջ անհրաժեշտ է անցկացնել լիարժեք մարդահամար: Գրեթե բոլոր տնային տնտեսությունները, բացառությամբ տարեցների ընտանիքների, ունեն մեկ բջջային հեռախոս,ինչը թույլ է տալիս կապ հաստատել նրանց հետ: Ինֆորմացիան այս խմբում արագ է տարածվում, քանի որ շատերը միմյանց հետ գտնվում են ընտանեկան կապերի մեջ: Համայնքում գործում են փոխօգնության բազմաթիվ ոչ ֆորմալ մեխանիզմներ, օրինակ՝ ռեսուրսների համատեղ օգտագործումը կամ վստահության վրա հիմնված հարաբերությունները:

Ինչպես նկարագված է 4.2 բաժնում տեղեկատվական հանդիպումից մեկ շաբաթ անց, փորձագետը պետք է տեղեկացնի գրանցման վայրը, ուր մոտ երեք օր շարունակ կանցկացվի մարդահամարը: Այս կլինի Նուբարաշենի #2-4 խաղահրապարակը, որն արդեն ծառայում է հանդիպումների համար:

Ստանդարտացված մարդահամարի գործընթացի ապահովման համար անհրաժեշտ է նախապես պարտաստել հարցաթերթիկը: Այն պետք է լինի դյուրին՝ լրացնելու համար, օրինակ՝ հնարավորություն տա պարզապես նշել անհրաժեշտ տարբերակը: Այն պետք է ներառի հետևյալ հարցերը (օրինակ, ոչ վերջնական թվարկում): Բոլորն, այդ թվում՝ երեխաները պետք է ունենան սեփական հարցաթերթիկը, ապահովելու գնահատման ճշգրտությունը և պատասխանների կրկնությունը ընտանիքի անդամների հարցաթերթիկներում: Բաց հարցերի առկայությունն ապահովելու համար, անհրաժեշտ է տալ լրացուցիչ հարցեր՝ միջին եկամտի, աղբավայրում անցկացվող ժամանակի, համայնքում ապրող մարդկանց, նամիջական հարևանների այլ եկամուտների և սոցիալական փաթեթներից օգտվելու հավանականության մասին:

Անուն …… (գաղտնի)		Տարիք ……	Սեռ ……	☐ Կին ավագ ունեցող տնային տնտեսություն ……	Ընտանիքի անդամների թիվը ……
Զբաղվածության	☐	☐	☐	☐	☐

կարգավիճակ	թոշակառու	գործազուրկ	Աշխատում եմ	դպրոցական	երեխա
Աղբահավաքում	☐ շշեր	☐ պլաստիկ	☐ թուղթ	☐ մետաղներ	☐ սնունդ
	☐ կոշիկ	☐ այլ	☐ …	☐ …	☐ Չի հավաքում
Ամսական եկամուտն աղբահավաքումից (դրամ/ամիս)	☐ < 40,000	☐ 40,000 –ից 80,000	☐ 80,000 –ից 120,000	☐ 120,000 –ից 160,000	☐ >160,000
Ամիսներ, երբ աղբահավաքմամբ չեք զբաղվում	☐ Ոչ	☐ Տարվա մեջ մի քանի օր՝ վատ եղանակային պայմանների պատճառով	☐ Տարեկան մեկ կամ երկու ամիս (նշել)	☐ Ձմեռ կամ ամառ	☐ Ձմեռ և ամառ
Այլ եկամուտներ (սոցիալական օգնություն)	☐ թոշակ	☐ Երեխայի նպաստ	☐ աշխատավարձ	☐ Այլ	☐
(դրամ/ամիս)	☐ < 20,000	☐ 20,000 –ից 40,000	☐ 40,000 –ից 60,000	☐ 60,000 –ից 100,000	☐ >100,000
Share of income from the landfill to the household տնային տնեսության եկամուտի աղբյուներից աղբավայրի մասնաբաժինը	☐ < 20%	☐ 20-50%	☐ 50-80%	☐ >80%	
Աղբավայրում օրական անցկացված ժամանակը (փոխհատուցում ստանալու համար չափանիշ)	☐ <3 ժամ	☐ 3 –ից 5 ժամ	☐ 5 –ից 8 ժամ	☐ >8 ժամ	☐
Անձնական փաստաթղթեր /	☐ Շնորհյան	☐ անձնագիր		☐ ……..	

գրանցում	վկայական				
Գրանցում	Վայրը_____				
Կրթություն	…….....				
Նախկին զբաղմունքը	…….....				

Աղյուսակ 3. Մարդահամարի համար ստանդարտացված հարցաթերթիկ

Ոչ ճշգրիտ ինֆորմացիայի ստացումից և փոխհատուցման համար չանիշերին չհամապատասխանող մարդկանց գրանցումից խուսափելու համար, անհրաժեշտ է պատրաստել զուգահեռ ցուցակ, ուր մարդիկ կնշեն իրենց անունները և կստորագրեն՝ հարցմանը մասնակցելուց հետո: Այս ցուցակը կօգնի համակարգել գրանցման գործընթացը:

Մարդահամարից ստացվող տվյալները թույլ կտան ստեղծել փոխհատուցումների մատրիցա, չափանիշերին համապատասխանության աղյուսակ և հաշվարկել նպաստների սահմանաչափերը (տե՛ս բաշին 4.7): Այդ տվյալները նաև կօգտագործվեն մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպման ընթացքում:

4.4 Սոցիալ-տնտեսական հետազոտություն

Եկամուտների աստիճանը գնահատելու համար անկախ փորձագետի կողմից պետք է իրականացվի տնտեսագիտական ուսումնասիրություն: Փորձագետը պետք է ծանոթ լինի վերամշակվող նյութերի շուկայական գներին և դրանք վաճառելու հնարավորություններին:

Այս անկախ ուսումնասիրությունը նպատակ ունի որոշակի վստահելիությամբ տվյալներ ձեռք բերելու աղբահավաքման միջոցով եկամուտների ստացման մասին՝ ի հավելում մարդահամարի տվյալների: պետք է նշել, որ աղբահավաքումը ստվերային շուկայի մաս է կազմում և անմիջական տվյալների ստացումը հնարավոր չէ:

4.5 Գրանցման վերջնաժակետ

Լիարժեք մարդահամարի տվյալները ստանալուց անմիջապես հետո, անհրաժեշտ է սահմանել և հայտարարել հաշվառման օր: Ընտրված անկախ փորձագետը պետք է վերահսկի հաշվառման գործընթացը՝ կանխելու չարտոնված գրանցումը, երաշխավորելու ազդեցությունը կրող բոլոր մադկանց գրանցումը, ինչպես նաև նվազեցնելու կոռուպցիայի և հովանավորչության միջոցով հաշվառվելու հավանականությունը:

Խոցելի անհատները և խմբերը, ում համար անհրաժեշտ են պատշաճ կերպով խորհրդատվություն, փոխահատուցում և կենսապահովման պայմանների վերականգման միջոցներ ստանալու հատուկ հնարավորություններ, պետք է հաշվառվել առանձին օր: Այն պետք է հայտարարվի բնակիչների շրջանում՝ որոշակի գրաֆիկով, օրինակ՝ տվյալ օրվանից մեկ շաբաթ առաջ:

Մարդկանց նաև անհրաժեշտ է տեղեկացնել նախատեսվող փոխհատուցումների տեսակների վերաբերյալ (օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում, աջակցություն):

4.6 Բողոքներ և բողոքներին արձագանքնման մեխանիզմներ

Ինչպես նշվում է ՎԶԵԲ ԿՊ5-ում բողոքներին արձագանքնման մեխանիզմներն անհրաժեշտ է կարգավորել հնարավորին վաղ, որպեսզի հնարավոր լինի փոխհատուցումների վերաբերյալ մտահոգությունները ստանալ և արձագանքել դրանց պատշաճ կերպով, ներառյալ աջակցության մեխանիզմները՝ անկողմակալ կերպով: Հանրությունը պետք է բողոքների և դրանց լուծման միջոցների մասին ամփոփ և պարբերաբար տեղեկացվի:

Նախագծի ազդեցությունը կրող մարդիկ պետք է կարողանանա իրենց բողոքներն ուղղել գործընթացը համակարգող խորհրդատուին:

Բոլոր մեկնաբանությունները և բողոքները պետք է ուղղվեն և մշակվեն համապատասխան մասնագետների կողմից և փոխանցվեն Երևանի քաղաքապետարանին:

Մարդահամարն անցակցնող և հետագա գործողությունները համակարգող խորհրդատուն պետք է սահմանի բողոքներին արձագանքման մեխանիզմը և, փորձառու մասնագետներ ներգավելով, ստեղծի բողոքներին արձագանքման մեխանիզմի սահուն աշխատանքը վերահսկող հանձնաժողով, որի աշխատանքներին կմասնակցեն նաև պատվիրատուի ներկայացուցիչներ

Այդ նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ կետերը.

- Ինչպե՞ս և ու՞մ կարող են ուղղվել բողոքները
- Ո՞վ կարող է լինել բողոքներին արձագանքման մեխանիզմի աշխատանքը համակարգող հանձնաժողովում
- Ո՞վ և ի՞նչ կերպ է արձագանքում տաբեր բողոքերի և որքա՞ն ժամանակում
- Ինչպե՞ս է բողքը ներակայացնողը տեղեկանում լուծման մասին

Ավելին, անհրաժեշտ է սահմանել Երևանի քաղաքապետարանին և ՎԶԵԲ զեկուցման մեխանիզմը;

4.7 Փոխհատուցումներ

4.7.1 Entitlement matrix and compensation framework

Լիարժեք մարդահամարի տվյալների հիամն վրա անհրաժեշտ է պատրաստել փոխահատուցումների մատիրցա, որում նկարագրվում են փոխհատուցումը տարամադրելու պայմաններն՝ ըստ ազդեցության կատեգորիայի: ՎԶԵԲ ԿՊ5-ի համաձայն, ազդեցությունը կրողների բոլոր կատեգորիաները (սեռ և տարիք) կներառվեն փոխհատուցման մատրիցայում և համապատասխան փոխահատուցում և աջակցություն կստանան:

ՀԻմնական նպատակը ազդեցությունը կրող մարդկանց շախատաշուկայում վերաինտեգրելն է և այլընտանքային շախատանքով ապահովելը: մարդկանց խոցելի խմբերի համար, օրինակ՝ տարեցների և երեխաների, կտարմադրվի թիրախային օժանդակություն՝ սոցիալական աջակցության ծրագրերից: Երկարաժամկետ կտրվածքում թոխահատուցումը պետք է բոլոր ազդեցությունը կրողներին օգնի օգտվել սոցիալական աջակցությունից (պետական կամ այլընտանքային ծրագրեր): Ծրագրերից օգտվելու համար ներկայացվող չափանիշերին համապատասխանությունը (օրինակ՝ ունենալ

գրանցում) պետք է լինեն աջակցության գործընթացի մաս:

Հաջողությամբ իրականացվելու համար այս ծրագիրը պետք է սկսվի նախքան շինարարությունը՝ տնտեսական կորուստներից հնարավորին խուսափելու համար: Միայն այն դեպքերում, երբ այլ միջոցներն արդյունավետ չեն, նախատեսվում է նացումային փուլի նպաստ, որը կարելի է ստանալ մինրև երեք ամիս (համակարգվում է Երևանի քաղաքապետարանի կողմից, Ռուդիկ Մարտիրոսյան 03/2015): Հետևյալ կասկադային աղյուսակը ներկայացնում է փոխահատուցումների տրամադրման հաջորդական քայլերը: Այն պետք է իրականացվի քայլ առ քայլ՝ ապահովելու հետագա աջակցության անհրաժեշտության կամ աշխատանքի տեղավորման հարցում անհաջող փորձի դեպքերում միջոցների օգտագործում (քայլեր 2 և 3):

Գործընթացը պետք է մեկնարկի նախագծի իրականացումը սկսելուց առնվազն կես տարի առաջ, ինչը թույլ կտա փոխահատուցումների միջոցով խուսափել տնտեսական կորուստներից այն ժամանակ, երբ շինարարական աշխատանքները սկսելիս աղբահավաքումն այլևս հնարավոր չի լինի: Կենսաապահովման պայմանների վերականգման ծրագրի վաղ մկենարկի շնորհիվ հնարավոր կլինի խուսափել տնտեսական կորուստներից:



Աղյուսակ 4. Փոխհատուցման կասկադային մոդել

ԿՊՎԾ նաև կներառի.

- ընթացիկ հանրային խորհրդակցություն և մասնակցություն
- բողոքներին արձագանքման մեխանիզմ
- ԿՊՎԾ իրականացման մշտադիտարկում և գնահատում

4.7.2 Փոխհատուցումներ՝ ըստ մասնագիտական վերապատրաստման

Մասնագիտական վերապատրաստման և զբաղվածության վերաինտեգրման համար անհրաժեշտ է կազմակերպել սեմինարներ, որոնք թույլ կտան կողմնորոշվել աշխատանքի հնարավորություններում (նախատեսված են նրանց համար, ովքեր աշխատանք են գտել): Այս վերապատրաստումը պետք է կազմակերպվի շուկայի պահանջներից ելնելով, նախընտրելի է զբաղվածության պետական մարմնի մասնակցությամբ:

Հաշվառված բոլոր անդամները պետք է լինեն գրագետ և ունենան թերի կամ լրիվ միջնակարգ կրթություն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն: Կենսապահովման պայմանների այլընտանքային հնարավորություններին անդրադառնալիս հարցված աղբահավաքների մեշամասնությունը նշել է աշխատանքի վերադառնալը: Հնարավորության և աշխատանքի շուկայում նման պահանջարկի դեպքում, մասնագիտական վերապատրաստումը կարող է լինել նախկին զբաղմունքի և ունեցած գիտելիքների ոլորտում: Աղյուսակ 5-ում բերվում են հարցվածների՝ բաց հարցերին տրված պատասխանները:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ (ԲԱՑ ՀԱՐՑԵՐ)
Վարորդ (նախկինում)
Շարունակել ուսումը, իրավունք սովորել
Հավաքարար, մատուցող
Աշխատանք՝ ֆերմայում (նախկինում), **հավաքարար**
Աման լվացող, դայակ
Շինարար
Մետրոյի հսկիչ (նախկինում, այժմ աշխատում է աղբավայրում, թոշակային տարիք)
Վարորդ (նախկինում, ինչպես նաև ներկայում՝ աղբավայրում),
Հաշվապահ (ներկայում աղբավայրում բանվոր է)
Բուլդոզերի գործարկող (ներկայում աշխատում է աղբավայրում)
Դարբին, շինարար (մինչև վերջերս աշխատել է աղբավայրում)

Աղյուսակ 5 Հարցմանը մասնակցածների մասնագիտական վերապատրաստման նախապատվությունները

Սեմինարները նպատակահարմար (խորհուրդ տրվող ժամանակային գրաֆիկում առավել նպատակային) է կազմակերպել զբաղվածության հետևյալ տեսակների համար (ենթադրում է նախկին աշխատավայրում ձեռք բերած գիտելիքի առկայություն).

- մատուցող / մատուցողուհի
- հավաքարար
- դայակ
- շինարար
- մետրոյի հսկիչ
- վարորդ
- բուլդոզերի գործարկող
- հաշվապահ

Աղբահավաքմամբ զբաղվելու հիմնական պատճառ են նշվել հարմար աշխատանք գտնելու անհնարինությունը, աշխատազուրկ դառնալը կամ թոշակային տարիքի հասնելը:

Թոշակային տարիքի հասած անձինք նշել են, որ աղբահավաքումը թույլ է տալիս աշխատանքի այլ հնարավորությունների բացակայության, ցածր թոշակների կամ ֆինանսական աջակցություն ցուցաբերող ընտանիքի անդամների բացակայության պայմաններում ունենալ եկամտի աղբյուր:

Այդուհանդերձ, նախքան վերապատրաստումը, կարևոր է վերլուծել Երևանում աշխատանքի շուկան՝ պարզելու որոշ մասնագիտությունների իրական պահանջարկը, հատկապես ինչ վերաբերում է ցածր որակավորում պահանջող աշխատանքներին: Այս կերպ կարելի է վերապատրաստման դասընթացները համապատասխանեցնել շուկայի պահանջարկին և մեծացնել աշխատանքի տեղավորման հնարավորությունները: Այս նպատակով, անհրաժեշտ է պետական և մասնավոր զբաղվածության կենտրոնների հետ համաձայնություն ձեռք բերել: Որպես առաջին քայլ, կարելի է խորհրդակցել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:

Խորհուրդ է տրվում մասնագիտական վերապատրաստման դասընթացների տևողությունը սահմանել նվազագույնը մեկ շաբաթ:

Ցանկալի է սեմինարները և դասընթացներն իրականացնել բնակավայրերի մոտակայքում կամ Երևանի մոտակա շրջաններում: Մասնակիցները պետք է ստորագրեն մասնագիտական վերապատրաստում անցնելու պայմանագիր:

Նոր աղբավայրը ևս այլընտրանքային աշխատանքի հնարավորություններ է ընձեռելու՝ հարմար այն մարդկանց, ովքեր կրելու են տնտեսական կորուստներ: Ինչպես նշվում է ՇՄՍԿՀՈՒԱ (ESDD 3)-ում նոր նախագիծը որակավորում չպահանջող բանվորների և պահակների մինչև 10 հաստիք կունենա: Վերապատրաստման ընթացքում պետք է հաշվի առնել նաև այս աշխատատեղերը: Անհրաժեշտ է երաշխավորել այս աշխատատեղերի զբաղեցման և վարձատրության հավասար պայմաններ: Գենդերային հարցերին հատուկ ուշադրություն դարձնող ընկերությունները տենդերի անցկացման ընթացքում պետք է նախընտրելի լինեն:

Շինարարության փոլում ևս ժամանակվոր շախատատեղեր կբացվեն: Վերը նշված գենդերային հարցերը պետք է նաև հաշվի առնվեն շինարարության համար տենդերի անցկացման ընթացքում: Խնդրին հատկացվող ուշադրությունը պետք է մշտադիտարկվի Երևանի քաղաքապետարանի կողմից նշանակված տղամարդկանց և կանանց համար հավասար պայմանների ապահովման հարցում պատասխանատուի կողմից:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել կանանց կարիքներին: Մասնագիտական

վերապատրաստում անցկացնելիս կանանց և տղամարդկանց պետք է տրվեն հավասար հնարավորություններ: Կանանց մասնակցությունը երաշխավորելու համար, անհրաժեշտ է կազմակերպել երեխաների խնամք: Երևանի քաղաքապետարանը համաձայնություն է տվել աջակցության կարիք ունեցող կանանց տրամադրել նման հնարավորություն (ռուդիկ Թադևոսյանի էլ.փոստի հասցեն, Երևանի քաղաքապետարան, 04/2015): Մասնագիտական վերապատրաստման հնարավորությունները պետք է հավասարապես հասանելի լինեն կանանց համար անգամ երբ խոսքը գնում է ավանդաբար տղամարդկանց բնորոշ համարվող մասնագիտությունների մասին:

4.7.3 Փոխհատուցումներ՝ ըստ սոցիալական ծրագրերի

Նույնչափ կարևոր է նաև Հայաստանի և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող օժանդակության մատչելիությունը (տե՛ս բաժին 2.1): ԿՊՎԾ համակարգող մասնագետը պետք է երաշխավորի, որ ազդեցությունները կրող անձինք ստանան իրենց հասանելիք սոցիալական աջակցությունը՝ ներառյալ ամբողջ իրավական աջակցությունը: Ինչպես ցույց է տրված աղյուսակ 4-ում այն դեպքերում, երբ նպատակը աշխատանք գտնելը չէ, ոչ աշխատանքային տարիքի շահառուները, մասնավորապես՝ երեխաները և տարեցները, հնարավորություն ունենան հաշվառվելու և մնալու ծրագրերի շահառուների մեջ որքան հնարավոր է երկար կամ որքան անհրաժեշտ է:

Այս միջոցներն անբավարար լինելու դեպքում պետական սոցիալական աջակցության շրջանակները պետք է ընդլայնել և դիմել միջազգային ծրագրերի:

Աշխատանքային տարիքի շահառուների դեպքում անհրաժեշտ է տրամադրել գործազրկության հետագա աջակցություն՝ ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրերի:

4.7.4 Այլ աջակցություն

Եվս մեկ կարևոր խնդիր է շարժունակությունը: Սա հատկապես վերաբերում է կանանց շուկայում իտեգրվելուն, քանի որ Նուբարաշենի համայնքային կենտրոն հասնելը և այնտեղից մայրաքաղաքի կենտրոն տանող երթուղային տաքսի նստելը նրանց համար մատչելի չէ կամ ժամանակատար՝ ոտքով հասնելու պարագայում: քիչ վճարվող աշխատանքների համար, ինչպիսիք են տնային տնտեսվարումը կամ ամանների լվացումը, անհրաժեշտ է անցկացնել գնարդյունավետության հաշվարկ՝ պարզելու արդյոք հասարակական տրանսպորտի համար ծախսն արդարացված է: Անհրաժեշտ է լուծել հասարակական տրանսպորտի հարցը՝ շարժունակությունը և աշխատանքի որոնումների արդյունավետությունը երաշխավորելու համար: Հարցը նաև վերաբերում է դպրոցական երեխաներին. դպրոցից դուրս մնալու ցուցանիշները նվազեցնելու համար անհրաժեշտ է կազմակերպել նրանց տրասնպորտային փոխադրումը մատչելի տարբերակով: հաշվի առնելով տրանսպորտի բացակայությունը և հեռավորությունը կենտրոնից աղբահավաքները և նրանց ընտանիքների անդամները ստիպված են կիսել տաքսիով մինչև մայրուղի երթևեկելու ծապսերն ուրիշ ուղևորների հետ՝ մայրուղուց երթուղային տաքսի տեղափոխվելու ակնկալիքով: Վերադառնալու համար օգտագործվում են նույն միջոցները՝ կիսելով տաքսու ծախսը 4-5 ուղևորների միջև: Սրա համար զգալի ջանքեր են պահանջվում, որոնք կարելի է ուղղորդել առավել նպատակային:

Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել անվտանգության հարցը. մայրուղու վրա չկան ոչ կանգառասրահներ և ոչ էլ պատսպարվելու հնարավորություն, որպեսզի մարդիկ ապահով կարողանա սպասել երթուղայինի կամ ավտոբուսի, հատկապես ձմռան ամսիներին, երբ ցերեկները կարճ են:

Նուբարաշենի բնակչին Երևանի կենտրոն երթուղայինով հասնելու համար անհրաժեշտ է 100 դրամ, մինչդեռ աղբավայրի մոտ բնակվողների համար առնվազն 200 դրամ է հարկավոր, եթե հաշվի առնենք, որ համայնքային կենտրոն տաքսիով հասնելու համաձայն մարդկանց թիվը կազմում է 4-5 հոգի (և սա՝ չհաշված տաքսի կանչելու համար արված բջջային հեռախոսակապի ծախսերը): Ավելին, Նուբարաշենի բնակիչները երեխաներին դպրոց ուղարկելու համար տրանսպորտի ծախս չեն անում, քանի որ դպրոցները հասանելի են հետիոտնի համար: Մինչդեռ աղբավայրի մոտ բնակվողները ստիպված են վճարել վարձու ավտոբուսի համար, որը երեխաներին հասցնում է դպրոց և հետ բերում: Որոշ դեպքերում նաև անհրաժեշտ է լինում վճարել տաքսիի համար, եթե երեխաներին անհրաժեշտ է ավելի երկար մնալ կամ ավելի շուտ վերադառնալ դպրոցից: Նուբարաշենի թաղապետարանը պետք է ապահովի տրանսպորտային ցանցի լիարժեք ընդգրկում:

Երևանի քաղաքապետարանը հավաստիացրել է, որ ավտոբուսային կանգառ է նախատեսում բնակավայրին մոտ (Երևանի քաղաքապետարան, Ռուդիկ Թադևոսյան, 03/2015):

Տրանսպորտային գրաֆիկում անհրաժեշտ է հաշվի առնել առնվազն հետևյալ ժամերը.

- Վաղ առավոտյան (աշխատանքի մեկնողների համար)
- Դասերը սկսվելուց առաջ

Վերադառնալու համար.

- կեսօրին / դասերն ավարտվելուց հետո
- Աշխատանքից հետո, օրինակ՝ 19:00

Ավտոբուսային կանգառը պետք է հագեցած լինի լուսավորությամբ, ապահովելու հատկապես կանանց անվտանգությունը: Մինչև տրանսպորտային ցանցի ընդլայնումը, անհրաժեշտ է տրամադրել անհատական ֆինանսական աջակցություն աշխատանքի/դպրոց/ այլուր հասնելու համար:

4.7.5 Փոխհատուցումներ՝ ըստ միջին ֆինանսական արժեքների

Եթե վերը նշված միջոցառումներից ոչ մեկն ակնկալվող արդյունքներ չտվեց (մասնագիտական վերապատրաստում, այլ սոցիալական ծրագրեր), խորհուրդ է տրվում երաշխավորելու երեք միջին աշխատավարձի չափով գումար՝ որպես անցումային փուլի նպաստ: Ուսումնասիրության տվյալների համաձայն աղբահավաքման արդյունքում ստացվող մեկ շնչի միջին ամսական եկամուտը 60 000 դրամ է (110 €): Սոցիալ-տնտեսական ուսումնասիրության արդյունքների համաձայն, անհրաժեշտ է սահմանել փոխահատուցման չափի որոշման բանաձևը:

Համեմատության համար՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» (2013)

վերջին ուսումնասիրության համաձայն[1],աղքատության վերին շեմը 37 044 դրամ է (կոպիտ հաշվարկով՝ 71,46 եվրո), իսկ նվազագույնը 30 547 դրամ, պարենային կամ ծայրահեղ աղքատության շեմը՝ 21 713 դրամ (կոպիտ հաշվարկով 43 եվրո): Սա նշանակում է, որ ծայարահեղ աղքատության դեպքում գոյատևման սահմանը օրական 1,4 եվրո է:

Հաշվի առնելով, որ աղքատության ցուցանիշերը հիմնվում են ծայրահեղ պայմանների վրա, խորհուրդ է տրվում հաշվի առնել աղբահավաքումից ստացվող միջին եկամուտները:

[1] Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, 2013 «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» URL: http://www.armstat.am/en/?nid=539&id=1503

4.7.6 Ժամանակավոր փոխհատուցումների մատրիցա

Աղբավայրում ժամանակի ավելի քան 20 տոկոսը անցկացնող աղբահավաքների և կարճ ժամանակ այնտեղ գտնվողների միջև տարանջատում անելու համար, ժամանակավոր փոխհատուցումների մատրիցան ժամանակի 20 տոկոսից պակասն աղբավայրում անցկացնելը սահմանում է որպես փոխհատուցում ստանալու չափանիշներին անհամապատասխանության ցուցանիշ:

Ենթադրվում է, որ ցանկացած մեկն, ով իր ժամանակի 20 տոկոսից ավելի անցկացնում է աղբ հավաքելով, իր եկամուտը ստանում է այդ միջոցով: Հաշվի առնելով աղբահավաքումից ստացվող ցածր եկամուտները, այս մարդիկ բոլորն են պետք է համարվեն խոցելի:

ՆԱԽԱԳԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՂԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ	ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ
Հաշվառման օրվա դրությամբ սեփական ժամանակի ավելի քան 20 տոկոսը հին աղբավայրում անցկացնող անձինք (աշխատանքային տարիքի՝ բոլոր ազդեցությունը կրող մարդիկ)	- քայլ 1՝ մասնագիտական երապատրաստման մատչելիություն - քայլ 1՝ աշխատանքի դիմելու հարցում աջակցություն - քայլ 1՝ գենդերային խնդիրներին վերաբերող աջակցություն (երեխաների խնամք դասընթացի ժամանակ), մեկ տարվա համար տպանսպորտային միջոցներից օգտվելու աջակցություն - քայլ 2՝ անձնական փաստաթղթերի ձևակերպման աջակցություն - քայլ 2՝ սոցիալական, առողջապահական և կրթական ծրագրերում ներգրավում - քայլ 2՝ աշխատատեղերի մատչելիություն / եկամտի գեներացման ծրագրեր՝ Երևանի ամբողջ տարածքում / հանրապետության տարածքում գործող կազմակերպություններում կամ գործակալություններում - քայլ 3՝ տնտեսագիտական հետազոտության արդյունքների հիման վրա սահմանված՝ աղբահավաքումից ստացվող ամսական եկամտի չափով փոխհատուցում՝ երեք ամիս տևողությամբ - քայլ 1-3՝ այլ աջակցություն, ներառյալ հասարակական տրանսպորտի մատչելիություն, տրանսպորտից օգտվելու համար ֆինանսական աջակցություն և այլն
Հաշվառման օրվա դրությամբ սեփական ժամանակի ավելի քան 20 տոկոսը հին աղբավայրում անցկացնող անձինք (երեխաներ, տարեցներ)	- քայլ 1՝ անձնական փաստաթղթերի ձևակերպման աջակցություն - քայլ 1՝ սոցիալական, առողջապահական և կրթական ծրագրերում ներգրավում - քայլ 2՝ նպատակային սոցիալական միջազգային ծրագրերում ներգրավում - քայլ 1-2՝ այլ աջակցություն, ներառյալ հասարակական տրանսպորտի մատչելիություն, տրանսպորտից օգտվելու համար ֆինանսական աջակցություն և այլն

Հաշվառման օրվա դրությամբ սեփական ժամանակի 20 տոկոսից պակաս հին աղբավայրում անցկացնող անձինք	Աղբահավաքումից ստացվող եկամտի չափով միայն

Աղյուսակ 5. Փոխհատուցումների մատրիցա

4.8 Փոխհատուցման պայմանագիր և վերանայման իրավունք

Փոխահատուցումների համաձայնեցված մանրամասների մասին արձանագրությունները պատրաստվում են երկու օրինակով և ստորագրվում երկու կողմերից: Փաստաթուղթը նկարագրում է բողոքների ներկայացման և արձագանքման մեխանիզմը: Ստորև բերվող աղյուսակն ընդհանրացնում է փոխհատուցումների սահմանման և բողոքների մշակման կարգը:

Մարդահամարն անցակցնող և հետագա գործողությունները համակարգող խորհրդատուն պետք է սահմանի բողոքներին արձագանքման մեխանիզմը և, փորձառու մասնագետներ ներգավելով, ստեղծի բողոքներին արձագանքման մեխանիզմի սահուն աշխատանքը վերահսկող հանձնաժողով, որի աշխատանքներին կմասնակցեն նաև պատվիրատուի ներկայացուցիչներ:



Աղյուսակ 6. ԿՊՎՇ գործընթացը, փոխհատուցման որոշումը և պատասխանատվության բաշխումը

4.9 Տեղեկությունների հրապարակում, մասնակցություն և խորհրդատվություն

Հանրային հանդիպումները և Երևանի քաղաքապետարանի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ խորհրդակցությունները կայացել են 2014թ. հոկտեմբերին՝ նախագծի բնապահպանական ազդեցության գնահատման նախնական ուսումնասիրության ընթացքում:

Նույն նպատակով անցկացվել են նախագծի իրականացման տարածքում հասարակական կարծիքի հարցումներ, որոնց խնդիրը նախագծի իրականացման, այդ թվում հողի ձեռքբերման վերաբերյալ տեղի բնակչության վերաբերմունքի մասին տեղեկությունների ստացումն էր:

Առաջիկա հանդիպումները պետք է անցկացվեն որպես լիարժեք մարդահամարի իրականացմանը և գրանցման վերջնաժամկետի սահմանմանն ուղղված

գործողությունների մաս: Հրապարակումը նախատեսված է 2015-2016 թթ.-ին:

Բոլոր այլ խորհրդակցությունները կանցկացվեն Շահառուների ներգրավման ծրագրի (ՇՆԾ) շրջանակում:

4.10 Մշտադիտարկում և զեկուցում

Մշտադիտարկումը պետք է իրականացվի անկախ խորհրդատուի կողմից: ԿՊՎՇՇ կատարումը չպետք է վերահսկվի նախագիծը իրականացնող կամ դրա հետ առնչություն ունեցող այլ կազմակերպության կողմից, քանի որ դա կարող է շահերի բախման պատճառ դառնալ:

Զեկուցումները պետք է ներկայացվեն ամսական պարբերականությամբ՝ ԿՊՎՇՇ գործընթացի ժամանակահատվածում: Բոլոր այլ դեպքերում զեկույցները պետք է ներկայացվեն եռամսյակը մեկ: Զեկույցներում անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

- ԿՊՎՇՇ գործընթացի նկարագրություն
- ԿՊՎՇՇ փուլի նկարագրություն
- բողոքների նկարագրություն
- բողոքի ընդունման օրվա հաստատում
- ձեռնարկված քայլերի (ուսումնասիրություն, շտկում) նկարագրություն

4.11 Արժեքի հաշվարկ

Նախագծի ազդեցությունը կրող խոցելի անձանց թիվը 160–ից 200 է: Հաշվի առնելով նրանց թվում երեխաների և տարեցների առկայությունը հիմք է ընդունվում 200-ը:

Վերջնական բյուջեն կախված կլինի տնտեսագիտական ուսումնասիրության արդյունքներից և պարզ կլինի փոխհատուցման իրավունք ունեցող մարդկանց հաշվառման վերջնաժամկետը լրանալուց հետո (վերջնական հաշվառում): Այս փուլում միջին եկամուտը որոշվում է նախագծի ազդեցությունը կրող մարդկանց մասին ունեցած տվյալների հիման վրա:

Ինչպես կարելի է եզրակացնել 2014թ. հոկտեմբերին անցկացրած ուսումնասիրության արդյունքներից, աղբահանության մեջ ներկայում ներգրավվածներին փոխհատուցման խորհուրդ տրվող գումարը կազմում է 60 000 դրամ (մոտավորապես 110 եվրո): Մասնագիտական վերապատրաստման բյուջեն չպետք է գերազանցի 850 եվրոն (460 000 դրամը) յուրաքանչյուր կուրսի համար: Հաշվի առնելով աղբահավաքների նախկին զբաղմունքների տեսակները, կառաջակվեն 8-ից 10 տարբեր մասնագիտությամբ դասընթացներ: Ակնկալվում է, որ դասընթացները կհաճախեն 20 հոգի:

ԿՊՎՇ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ				
Գործողություն	**Անձինք/միավորներ**	**Քանակ**	**Ընդհանուր գումար (դրամ)**	**Ընդամենը € (27.04.2015 փոխարժեքով)**
Հետագա գործողությունների ձեռնարկում				
Հետագա	1 հրավիրյալ	1 տարի	6 000 000	11 678

գործողությունների անցկացման խորհրդատու (մարդահամար, և այլն)	խորհրդատու			
անկախ գնահատող՝ տնտեսագիտական հետազոտության համար	հրավիրյալ խորհրդատու	1 հետազոտություն	1 000 000	1,946
Մասնագիտական վերապատրաստում (փոխհատուցման մատրիցայում քայլ 1)				
Մասնագիտական վերապատրաստում՝ 1 կուրս (մոտավոր 10 կուրս յուրաքանչյուր 20 հոգի համար)	450 000 դրամ/կուրս	10 կուրս	4 500 000	8,758
Հավելյալ արժեք մասնագիտական / իրավական օգնության համար	Միանգամյա վճար		1 000 000	1,946
Այլ աջակցություն				
Նախքան տրանսպորտային ցանցի ընդլայնումը տրանսրոպտի ծասեր (200 դրամ օրական՝ յուրաքանչյուրին հաշվարկ՝ 150 հոգու համար)	150 հոգի	300 օր (25 օր/ամիս)	9 000 000	18,491
Անցումային նպաստ (փոխհատուցման մատրիցայում քայլ 3)				
Փոխհատուցման գումար (միջին ամսական եկամտի հաշվարկով) 60 000 դրամ (հստակ թիվն ըստ տնտեսագիտրական ուսումնասիրության)	հստակ թիվն ըստ տնտեսագիտրական ուսումնասիրության		Մարդկանց և եկամուտների հստակ թիվն ըստ տնտեսագիտրական ուսումնասիրության	Մարդկանց և եկամուտների հստակ թիվն ըստ տնտեսագիտրական ուսումնասիրության

Աղյուսակ 7 ԿՊՎՇ արժեքի մոտավոր հաշվարկ

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Օրենսդրություն

- ՀՀ օրենքը զբաղվածության մասին
- ՀՀ կառավարության 534-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 39-րդ արձանագրություն-որոշումը
- ՀՀ օրենքը պետական նպաստների մասին
- ՀՀ կառավարության 145-Ն որոշումը

Սոցիալական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

- Կայք՝ http://www.mlsa.am

ԱՄՆ ՄԶԳ

- Կայք՝ http://www.usaid.gov/social-protection

Հայ օգնության հիմնադրամ

- Կայք՝ http://www.farusa.org

«Վորլդ վիժն» Հայաստան

- Կայք՝ http://www.wvarmenia.am

Եվրոպական հանձնաժողով, 2007՝ Manual for Gender Mainstreaming of Employment Policies

EBRD 2010: Strategic Gender Initiative